«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N7

25.07.2025թ. գ. Ոսկեվան

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 23-րդ կետի 13-րդ ենթակետով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝

1. Սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության խրախուսման միջոցները, կարգը և ձևերը՝ համաձայն հավելվածի:
2. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահ Բ. Սաֆարյանին՝ ապահովել սույն որոշման տեղադրումը կայքում ու այլ միջոցներով հանրայնացումը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ _____

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ _____

25.07.2025թ.

Հավելված

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N7 որոշման

ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ԿԱՐԳ ԵՎ ՁԵՎԵՐ «ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ակտով սահմանվում է «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից խրախուսման միջոցների կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Կազմակերպության անդամները, աշխատակիցները, բարերարները կամ այլ, այդ թվում օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող, անձինք Կազմակերպության կողմից խրախուսանքի արժանանում են Կազմակերպության նպատակներն իրագործելու համար զգալի ավանդի, բարեգործական գործունեության, Ոսկեվան գյուղում իրականացրած ներդրումների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մասնակցության և մատուցած ծառայությունների համար:

II. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

3. Կազմակերպության կողմից տրվող խրախուսման միջոցները և ձևերն են՝

1) շնորհակալագիր.

2) պատվոգիր.

3) թանկարժեք նվեր.

4) հուշանվեր.

5) դրամական պարգևատրում.

6) Կազմակերպության պատվավոր անդամ.

7) «Ոսկեվան» հուշամեդալ:

4. Սույն ակտի 3-րդ կետի՝

1) 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված խրախուսանքները շնորհում է Կազմակերպության Նախագահը.

2) 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված խրախուսանքները շնորհում է Կազմակերպության Խորհուրդը.

3) 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված խրախուսանքները շնորհում է Կազմակերպության Ընդհանուր ժողովը:

III. ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Խրախուսանք տալու միջնորդություններ կարող են ներկայացնել՝

1) Կազմակերպության նախագահը.

2) Կազմակերպության Խորհրդի առնվազն 3 անդամ.

3) Կազմակերպության անդամների առնվազն ¼-րդը:

6. Խրախուսանքին ներկայացվող անձի վերաբերյալ կարող են հարուցվել մեկից ավելի միջնորդություններ:

7. Միջնորդագրի հետ միասին ներկայացվում խրախուսման ներկայացվող անձի՝

1) կենսագրական տվյալները.

2) բնութագիրը՝ դրանում ներառելով առանձին ասպարեզներում ունեցած վաստակը:

8. Կազմակերպության Նախագահը ուսումնասիրելով խրախուսման միջնորդությունը և կից փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, վերադարձնել լրացուցիչ քննարկման կամ չեզոք կարծիքի:

9. Խրախուսման միջնորդության ուսումնասիրության դրական արդյունքների դեպքում Նախագահը սույն կարգի 4-րդ կետի՝

1) 1-ին ենթակետին համապատասխանելու դեպքում արձակում է խրաախուսման հրաման.

2) 2-րդ ենթակետին համապատասխանելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Կազմակերպության Խորհրդի քննարկմանը: Սույն ենթակետում նշված դեպքերում Խորհրուդը խրախոուսմաան հարցը լուծում է 5 աշխատանքային օրվա ընթացքում նիստ հրավիրելու կամ հեռավար քննարկամ միջոցով.

3) 3-րդ ենթակետին համապատասխանելու դեպքում ներկայացնում է Կազմակերպության Ընդհանուր Ժողովի առաջիկա նիստի քննարկմանը:

10. Խրախուսելոու իրավասություն ունեցող մարմինը կարող է վերանայել միջնորդված խրախուսանքի ձևը կամ մերժել միջնորդությունը:

11. Խրախուսանքները խրախուսվողին հանձնվում են հանդիսավոր պայմաններում:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ _____

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ _____